ՀՏԴ՝ 314.1 (479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-47

ԷԹՆԻԿ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ 1926 Թ. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ (Խորհրդային Հայաստանի օրինակով)*

ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ համամիութենական մարդահամար, հիմնական աղբյուրներ, ինքնության որոշարկում, պարսիկներ, ղարափափախներ, թուրքեր, աղրբեջանցիներ, Կենտրոնական վիճակագրական վարչություն, Աղբաբա, Զանգեզուր:

Նախաբան

Հայտնի է, որ մարդահամարը պետության կամ որոշակի տարածքի բնակչության վերաբերյալ առաջնային տեղեկատվության ստացման հավաստի աղբյուր է: Այն հստակ ժամանակահատվածում տեղեկության ստացման և միասնական մեթոդով մշակման գիտականորեն կազմակերպված գործընթաց է[1], որը հնարավորություն է տալիս ճշգրիտ պատկերացում կազմել բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, էթնոլեզվական պատկերի, գրագիտության աստիճանի, զբաղվածության և այլնի մասին: Ժամանակակից իմաստով՝ մարդահամարներ անցկացվել են XVIII դարի վերջից: Դրանց անցկացումը, տվյալների ստացումը և մշակումն իրականացվել է մեծ դժվարությամբ:

Թեև գոյություն ունեն ժողովրդագրական որոշակի տվյալներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել XIX դարում Արևելյան Հայաստանի բնակչության թվաքանակի և էթնիկ պատկերի վերաբերյալ, սակայն առաջին անգամ այդտեղ բնակչության շրջանում մարդահամար անցկացվեց 1897 թ. ռուսական համակայսերական առաջին և միակ մարդահամարի շրջանակներում: Նախորդ տասնամյակներում անցկացվել էին միայն տեղական-երկրամասային նշանակություն ունեցող հաշվառումներ, որոնք աչքի էին ընկնում թերի ու մակերեսային տեղեկատվությամբ և հեռու էին իրական մարդահամար լինելուց: Ստեղծվում էին նաև տեղեկատվական-նկարագրողական բնույթ ունեցող աշխատություններ, որոնք նպատակ ունեին հեշտացնելու կայսրության նորանվաճ երկրամասերի յուրացումը[2]: Նման հաշվառումները եթե անգամ հաղորդեին բնակչության ճշգրիտ թվական տվյալներ, սակայն մերօրյա պատկերացմամբ էթնիկ որոշարկման սկզբունքները դրանցում անհստակ էին: Ուստի էթնիկ տարաբաժանումը հաճախ կատարվում էր զուտ

---

* *Ներկայացվել է 21. VI. 2022 թ.: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի քրիստոնյա արևելքի բաժնի ասպիրանտ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ. Ա. Հակոբյանը (03. IX. 2022 թ.): Ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] Антонова. 2014, 21.

[2] *Տե՛ս* Евецкий. 1835, 27–51.

կրոնական և լեզվական հիմքերով: Սա հետևանք էր Ռուսական կայսրությունում տիրապետող ուղղափառ քրիստոնեական աշխարհայացքի, որից բխում էր կրոնադավանական ինքնագիտակցությամբ էթնիկ դասակարգումը: Միայն 1886 թ. Անդրկովկասի վերաբերյալ վիճակագրական տվյալներ պարունակող ամփոփագրում գոյություն ունեն առանձնացված ազգություններ (հիմնականում՝ մեծաքանակ)[3]: Սակայն 1897 թ. Համակայսերական մարդահամարի ժամանակ հաշվառված բնակչության խմբավորումը կրկին կատարվեց և՛ կրոնական, և՛ լեզվական հիմքով, բայց ոչ էթնիկ ինքնագիտակցությունը հաշվի առնելով[4]: Մարդահամարի անձնական թերթիկում մայրենի լեզվի վերաբերյալ հարցը նպատակ ուներ որոշարկել հենց էթնիկ պատկանելությունը[5]: Սակայն մայրենի լեզուն կամ կրոնն արձանագրելն ամենևին բավական չէին բնակչության էթնիկ պատկերը ճշգրիտ կամ ճշմարտանման վերարտադրելու համար: Էթնիկության որոշարկման խնդիրներ ժառանգեց նաև Խորհրդային Միությունն իր գոյության առաջին տարիներին:

Էթնիկ դասակարգման հիմնական սկզբունքները

1926 թ. Համամիութենական մարդահամարը, ըստ էության, երկրորդ խոշոր մարդահամարն էր, որն անցկացրեց խորհրդային իշխանությունը: Առաջին մարդահամարն անց էր կացվել 1920 թ. օգոստոսի 28-ի՝ Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի՝ «Բնակչության մասնագիտական և գյուղատնտեսական մարդահամարի անցկացման մասին՝ արդյունաբերական ձեռնարկությունների հաշվառմամբ» դեկրետով[6]: Այս մարդահամարի անձնական թերթիկի 4-րդ հարցը վերաբերում էր ազգային ինքնությանը՝ «Ի՞նչ ազգության է պատկանում» և «Մայրենի լեզուն»[7]: Սակայն դեռ ընթանում էր քաղաքացիական պատերազմը, և խորհրդայնացման գործընթացն ավարտված չէր ոչ միայն Ռուսաստանում, այլև Անդրկովկասում[8]: 1923 թ., երբ արդեն կազմավորվել էր ԽՍՀՄ-ը, անցկացվեց քաղաքային մարդահամար, որն ուներ գերազանցապես բնակչության զբաղվածության պատկերի վեր-

---

[3] *Տե՛ս* Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. 1893.

[4] Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам и городам, с указанием преобладающих вероисповеданий и сословий. 1905, 46–52, *նաև՝* Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905, 6–7.

[5] *Տե՛ս* Население России в XX веке. 2000, 16; *նաև՝* Hirsch. 2005, 41.

[6] Данные Всероссийской демографической переписи населения 28 августа 1920 года. 1923, *նաև՝* Воробьев. 1938, 11.

[7] Воробьев. 1938, 14.

[8] *1920 թ. օգոստոսի դրությամբ Անդրկովկասի երեք երկրներից խորհրդայնացված էր միայն Ադրբեջանը՝ 1920 թ. ապրիլին, Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ 1920 թ. դեկտեմբերին, իսկ Վրաստանինը՝ 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին: Ուստի Հայաստանին վերաբերվող տվյալներ այս մարդահամարից գոյություն չունեն:*

հանման ու արդյունաբերական ձեռնարկությունների հաշվառման նպատակ, և դրանում ազգային հարցը չէր շոշափվում[9]:

Փաստորեն, առաջին անգամ մանրամասն մշակված և հստակ մեթոդաբանություն ունեցող մարդահամար խորհրդային իշխանության կողմից անցկացվեց 1926 թ.: Ուստի Խորհրդային Հայաստանի բնակչության թվաքանակի ու ազգային կազմի մասին ամբողջական և համապարփակ առաջին տեղեկությունները ստացվել են համամիութենական հենց այս մարդահամարի արդյունքում: Հայկական ԽՍՀ բնակչության թվաքանակը կազմել է 881.290 մարդ:

Մարդահամարը մեծ հետաքրքրություն է ներկայացնում մի քանի առումներով: Դրա ժամանակ օգտագործվել են անձնական թերթիկներ, որոնց վրա հատուկ հարցով նախատեսված էր արձանագրել հաշվառվող անձի ազգությունը, մայրենի լեզուն: Արդյունքում առանձնացվել է ԽՍՀՄ-ում բնակվող շուրջ 191 էթնոսներ, որոնք խոսում էին 154 լեզուներով[10]: Առանձնացված ազգությունների նման քանակը գերազանցում է ինչպես 1897 թ. մարդահամարի արդյունքում որոշակիորեն առանձնացված ազգությունների թիվը (104 ազգություն), այնպես էլ՝ 1920 թ. (55 ազգություն), ինչը բացատրելի է մարդահամարի անցկացման գործառամարզի (արեալի) մեծացմամբ (1920 թ. մարդահամարի համեմատությամբ): 1926 թ. մարդահամարի արդյունքում առանձնացված ազգությունների թիվը մի քանի անգամ գերազանցում է նաև հաջորդ՝ 1939 թ. մարդահամարի արդյունքներին, երբ հաշվառվել էին ընդամենը 57 ազգեր (և մեկ՝ այլ), ու ընդամենը 38 լեզուներ ստացել էին մայրենի լեզվի կարգավիճակ[11]: Նման խոշոր տարբերությունների պատճառը ոչ միայն մարդահամարի անցկացման տարածքն էր, այլև այն սկզբունքները, որոնք ընկած էին ազգերի կամ ազգությունների տարբաժանման հիմքում:

1926 թ. մարդահամարի համար ստեղծվել էին երեք տեսակի հաշվառման թերթիկներ՝ անձնական, ընտանեկան և կալվածաթերթերը: Իհարկե, նման մասշտաբայնության մարդահամարի անցկացումը տեղեկատեխնիկական ցածր զարգացման պայմաններում, հաշվի առնելով ողջ ԽՍՀՄ բնակչության շրջանում դրագիտության ընդհանուր ցածր մակարդակը, մեծ դժվարություն էր ներկայացնում: Իր կոչում Կենտրոնական վիճակագրական վարչությունը ևս արձանագրում էր մարդահամարի անցկացման շուրջ հավանական դժվարությունները. «Մարդահամարը մեզանում կատարելու դժվարություններին ավելանում են մի շարք տեղական առանձնահատկություններ, ինչպես օրինակ հարմար ճանապարհներ չունենալը, ազգաբնակչության խոշորագույն տոկոսի անդրագետ լինելը, որակյալ ցուցակագրողների պակասը և այլն»[12]:

Այնուհանդերձ խորհրդային իշխանությունը մարդահամարի անցկացմանը արտակարգ կարևորություն էր հաղորդում: 1926 թ. Համամիութենական մար-

[9] *Տե՛ս* Всесоюзная городская перепись 1923 года – Итоги промышленной переписи. 1926, 629.

[10] Всесоюзная перепись населения 1926 года. Перечень и словарь народностей. – http://www.demoscope.ru/weekly/2014/0591/chit_zal01.php

[11] Всесоюзная перепись населения 1939 г.: Основные итоги. 1992, 80–81.

[12] *«Խորհրդային Հայաստան» (Երևան), 12. XII. 1926:*

դահամարի նախապատրաստման մասին արխիվային հատուկ գրությամբ հակիրճ ներկայացվում են սպասվելիք մարդահամարի նպատակներն ու խնդիրները: Այսպես՝ 1926 թ. Համամիութենական մարդահամարի գլխավոր նպատակն էր՝ «բնակչության թվաքանակի հաշվառումը, նրա ազգային, սոցիալական և մասնագիտական կազմը»[13]: Բնական է, որ խորհրդային սոցիալիստական երկրում առաջնայինը բնակչության զբաղվածության և սոցիալական կազմի իրական պատկերի վերհանման խնդիրն էր, և որպես երկրորդ կարևոր խնդիր՝ գրության մեջ նշված է հետևյալը. «Մարդահամարի երկրորդ առանցքը հանդիսանում է ազգությունների, մայրենի լեզվի և գրագիտության վերաբերյալ տվյալների ստացումը: Աչք չփակելով այն դժվարությունների վրա, որոնք առաջանում են մեր ժամանակներում ազգային կազմն ուսումնասիրելիս, պետք է խոստովանել, որ մենք կստանանք նշանակալի նյութեր բնակչության էթնոգրաֆիական կազմի վերաբերյալ»[14]: Մարդահամարի միջոցով բնակչության էթնիկ պատկերի հստակեցումն անհրաժեշտ էր խորհրդային իշխանությանը՝ սեփական ազգային քաղաքականության գործնական կիրառման առաջնահերթությունները հստակեցնելու համար:

Ի տարբերություն նախորդ մարդահամարների և տեղական-երկրամասային հաշվառումների, որոնց ժամանակ ազգերի ու ազգությունների առանձնացման հիմքում դրվել են հիմնականում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են կրոնը, լեզուն, ապա 1926 թ. մարդահամարն առանձնացավ՝ այս հարցին առանձնակի ուշադրություն հաղորդելով: Բնակչության էթնիկ կազմի որոշման սկզբունքները տարաձայնություններ էին առաջացրել դեռ մինչև մարդահամարը: Գոյություն ունեին երկու հիմնական մոտեցումներ. 1. տալ բնակչության էթնոգրաֆիական կամ ցեղային պատկերը, 2. արտահայտել բնակչության ազգային կազմն այնպես, ինչպես այն ձևավորվել է հեղափոխությունից հետո ազգերի ինքնորոշման արդյունքում[15]: Վերջնարդյունքում որոշվեց որպես տարբաժանման հիմք ընդունել «ժողովուրդ» («народность») ձևակերպումը, ի տարբերություն 1920 թ. և 1923 թ., երբ անձնական թերթիկներում կիրառվել է «ազգություն» («национальность») եզրույթը: Սակայն, «народность» եզրը, չնայած ռուսերենից որպես «ժողովուրդ» ուղիղ թարգմանությանը՝ պետք է հասկանալ էթնոս իմաստով: Այս առումով մարդահամարի տեսությունը պարզաբանում է. «Այժմ անձնական թերթիկում «ազգություն» եզրույթի փոխարեն կիրառվել է «ժողովուրդ» եզրույթն այն նպատակով, որ ակնկալվել է ստանալ ցեղային ծագման վերաբերյալ պատասխան, այսինքն՝ բնակչության այս կամ այն էթնիկ խմբի պատկանելության մասին»[16]: Այնուհետև կատարվում է չափազանց կարևոր մասնավորեցում. «Քանի որ մարդահամարը նպատակ է հետապնդում որոշել ցեղային (էթնոգրաֆիական) կազմը, կարիք չկա ազգությունը շփոթել կրոնով, հպատակությամբ կամ որևէ հան-

[13] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 163, ց. 2, գ. 1512, թ. 4:

[14] ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1512, թ. 4:

[15] Воробьев. 1938, 31.

[16] Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. 1928, 3.

բապետության տարածքում բնակվելու հանգամանքով: Ազգության վերաբերյալ հարցը կարող է չհամընկնել մայրենի լեզվի վերաբերյալ հարցին»[17]: Սրանով ազգության որոշարկումն ամբողջությամբ կախման մեջ էր հայտնվում հարցվողի ինքնագիտակցությունից ու ինքնընկալումից՝ անկախ կրոնից, լեզվից և տարածքային գործոններից: Նշյալ սկզբունքից կարելի է ենթադրել, որ, դիցուք, որևէ մեկը, ով ապրում էր Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս և չէր տիրապետում հայերենին, որպես մայրենի լեզվի կրող կարող էր հաշվառվել հայ, եթե գիտակցում էր իրեն իբրև այդպիսին: Նշենք նաև, որ հաջորդ՝ 1939 թ. Համամիութենական մարդահամարի ժամանակ հետքայլ կատարվեց նախորդ մարդահամարում կիրառված սկզբունքներից, և կրկին որպես հիմք ընդունվեց «ազգություն» եզրույթը, որով վերարտադրվելու էր ԽՍՀՄ բնակչության ազգային և ոչ թե ցեղային կազմը[18]: Սա պայմանավորված էր մեկ այլ խնդրով ևս՝ ինչպիսին է խորհրդային իշխանության մոտեցումն ազգային հարցի և դրա լուծման վերաբերյալ: 1920-ական թվականների սկզբին ազգային հարցի բովանդակության և դրա լուծման վերաբերյալ խորհրդային իշխանության հիմնական մոտեցումների խտացում կարելի է համարել 1923 թ. Համկ(բ)կ XII համագումարի ժամանակ Ի. Ստալինի՝ «Ազգային մոմենտները կուսակցության և պետական շինարարության մեջ» վերնագրով ելույթը[19], ըստ որի՝ ազգային հարցի լուծման բովանդակությունը ազգային շովինիզմի (վելիկոռուսական ու տեղական) բացառման մեջ է: Այս համագումարը սկիզբ դրեց արմատավորացման քաղաքականությանը[20]: Մեծամասնություն կազմող ազգությունների կողմից փոքրամասնությունների նկատմամբ ճնշումների բացառումը հնարավոր էր առաջին հերթին վերջիններիս թվական, էթնիկ-ցեղային, լեզվական հաշվառման և ճանաչման շնորհիվ, որի արտահայտումը եղավ 1926 թ. մարդահամարի ժամանակ 191 էթնոսների գրանցումը: Ըստ համագումարի տեսլականի՝ միութենական հանրապետություններում պետք է լինեն տիտղոսակիր ժողովուրդներ, նրանց կողքին՝ այլ ազգություններ, որոնք չեն ենթարկվի ազգային ճնշումների, կունենան սեփական լեզվով և մշակույթով առաջընթացի հնարավորություն: Այս ամենը տեղի կունենա «ազգերի սոցիալիստական համերաշխության» գաղափարի շրջանակներում՝ ինտերնացիոնալիզմի հաջող օրինակ ծառայելով Արևելքի և մնացյալ աշխարհի ժողովուրդների համար:

---

[17] Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. 1928, 3.

[18] *Տե՛ս* Всесоюзная перепись населения 1939 г.: Основные итоги. 1992, 14.

[19] *Ստալին. 1927, 150–186:*

[20] *Լայն իմաստով, բնիկավորման քաղաքականությունը* (коренизация) *նպատակ ուներ թուլացնել և կանխել ազգայնականության զարգացումը նախկին ոչ ռուսական գաղութացված ժողովուրդների շրջանում: Նեղ իմաստով, միութենական հանրապետություններում կամ ազգային շրջաններում «արմատավորացում» նշանակում է ոչ ռուսական, բնիկ ազգությունների ներկայացուցիչների ընդգրկում իշխանության մարմիններում ու հասարակական կյանքի համար կարևոր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, գիտությունը, արվեստը և այլն: Նախատեսվում էր դրանով իսկ հաղթահարել մշակութային հետամնացությունը որոշ շրջաններում:*

Բնակչության էթնիկ-ցեղային կազմի վերհանումն ինքնին ենթադրում էր, որ պետք է հաշվառվեն բոլոր էթնոսները սեփական ինքնանվամբ՝ էնդոէթնոնիմով, այսինքն՝ այն անվանումներով, որոնցով մատնանշում են իրենց ազգակցությունը էթնոսի մյուս անդամների հետ և արտահայտում տարբերությունն այլ էթնոսներից: Այսպիսով, այն ազգությունների հաշվառումը, որոնց ներկայացուցիչներն ունեին հստակ արտահայտված էթնիկ ինքնության ցուցիչներ և գիտակցում էին իրենց պատկանելությունը որոշակի էթնիկ խմբի կամ ազգության, կարծես թե դժվարություններ չէր հարուցում: Մեկ այլ խնդիր էր այն էթնիկ խմբերի էթնանվան գրանցումը հաշվառման ցուցակներում, որոնց տրված էթնանունները նախորդ մարդահամարների կամ հաշվառումների ժամանակ տարբեր էին եղել, կամ նրանց ներկայացուցիչները դժվարացել են հստակեցնել իրենց էթնիկ ինքնընկալումը-ինքնագիտակցությունը:

Պարսիկների, ղարափափախների և թուրքերի շփոթը Խորհրդային Հայաստանում

Վերոնշյալ խնդիրն առաջացավ նաև Խորհրդային Հայաստանում որոշակի էթնիկ խումբը «ղարափափախ»[21], «պարսիկ» կամ «թուրք» անվանելիս: Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ անհամապատասխանություն գոյություն ունի այն սկզբունքների մեջ, որ որդեգրել էր Խորհրդային իշխանությունը էթնանունների գրանցման հարցում, ու դրանք գործնականում կիրառելիս: Զավեն Կորկոտյանը, ով 1926 թ. եղել է Կենտրոնական վիճակագրական վարչության մարդահամարի բաժնի պետը, «Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831–1931 թթ.)» գրքում խոսելով 1926 թ. մարդահամարի էթնիկ որոշարկման սկզբունքների մասին՝ մեկ անգամ ևս նշում է. «1926 թ. մարդահամարը, համաձայն հրահանգի, վերջակետ դրեց այդ խառնաշփոթությանը և ղեկավարվեց «ինքնորոշման» սկզբունքով: Ով իրեն ինչպես էր անվանել, այդպես էլ ցուցակագրվել էր»[22]: Սակայն Խորհրդային Հայաստանում արձանագրված պարսիկների, ղարափափախների ու թյուրքերի էթնիկ շփոթը վկայում է, որ վերոնշյալ սկզբունքը գործնականում խախտվել է՝ մասնավորապես՝ թյուրքալեզու մահմեդական բնակչության հաշվառում կատարելիս: Խոսքը վերաբերում է 1926–1928 թթ. նախկին Լենինականի գավառի Աղբաբայի շրջանում (ներկայիս՝ Ամասիա), Զանգեզուրի գավառի Կապանի ու Սիսիանի շրջաններում, Մեղրիում, ինչպես նաև Երևանի գավառում և այլուր հաշվառված պարսիկներին ղարափափախ կամ թուրք անվանելու շուրջ ծավալված քննարկումներին:

Մինչ բուն շփոթին անդրադառնալն անհրաժեշտ է նշել՝ 1920-ական թվականների սկզբին խորհրդային իշխանությունն արդեն իսկ բախվել էր այն էթնիկ խմբերի դասակարգման ու անվանակոչման խնդրին, որոնք մահմեդական էին, խոսում էին թյուրքական խոսվածքով և էթնիկ որոշարկման այլ ցուցիչներ կարծես թե չունեին:

---

[21] *Թյուրքալեզու կիսաքոչվորական մահմեդական խմբերին ընդհանրաբար անվանել են «թարաքամա», «թերեքեմե» կամ «թարաքյամա»: Նրանց մի մասը սև գլխարկ դնելու պատճառով ստացել է «ղարափափախ» անվանումը:*

[22] *Կորկոտյան. 1932, 22:*

Վիճակագրական տվյալներում հստակորեն առանձնացված են օսմանցի թուրքերը: Այսպես էին անվանում դեռևս Օսմանյան կայսրության շրջանից Արևելյան Հայաստանի տարածքում բնակություն հաստատած թուրքերին[23]: Թեև Օսմանյան կայսրությունն այլևս գոյություն չուներ, սակայն ավանդույթի ուժով թուրքական այս խմբին, ըստ ծագման վայրի կամ հպատակության, վերագրվում էր «օսմանցի» տարբերակիչը[24]: Խորհրդային Հայաստանում բնակվող մյուս թյուրքախոս մահմեդական խմբերին հավաքական էթնանուն տալու անհաջող փորձ կատարվեց 1920-ական թվականների սկզբին: Այս մասին Զ. Կորկոտյանը գրում է. «Խորհրդային շրջանի սկզբին 1923 թ. մենք գտնում ենք առանձնացված քրդերին, իսկ մյուսները՝ միացված «թուրքո-թաթար» հասկացության տակ, որովհետև մի շարք տեղերում նրանք մասսայականորեն դրված էին թաթար (ռուսերեն հին տերմինի ազդեցության տակ), իսկ ուրիշ շրջաններում ուղղակի անվանվել են թուրք: 1922 թ. մշակման ժամանակ, որը կատարվել է իմ ղեկավարությամբ, անհնար եղավ այդ հասկացությունները զատել, և պարսիկ, թաթար, թուրք և այլ մի շարք իսլամ ազգեր հասկացությունը վերածվեց «թուրքո-թաթարներ» հասկացության»[25]: Նման արհեստածին հասկացության տակ եթե հնարավոր է պատկերացնել թաթարներին ու թուրքերին, անգամ ղարափափախներին, սակայն ինչպե՞ս այդ հասկացության տակ պատկերացնել պարսիկներին, որոնք բոլորովին այլ քաղաքակրթական ծագում և էթնիկ բնորոշիչներ ունեն: Սա Զ. Կորկոտյանը փորձում է բացատրել հետևյալ կերպ. «Գործառնական կյանքում թուրքերի հետ հաշվվում են նաև «պարսիկ», «ղարափափախ» և «օսմանյան թուրք» ազգություններին պատկանողները՝ նկատի ունենալով նրանց մի մայրենի լեզու ունենալը (ընդգծումը մերն է— Ա. Հ.)»[26]: Մինչդեռ 1926 թ. մարդահամարի՝ ազգությունների և լեզուների վերաբերյալ տեղեկագրում հաշվառված են և՛ ղարափափախները, որպես առանձին ազգություն[27], և՛ ղարափափախերենը՝ որպես առանձին լեզու[28]: Սակայն մեկ այլ խնդիր է պարսիկ հաշվառված անձանց իրական ինքնության պարզաբանումը: Զ. Կորկոտյանի մատնանշած փաստից, թե նրանք «մի մայրենի լեզու ունեն (ընդգծումը մերն է— Ա. Հ.)», կարելի է հստակ հասկանալ, որ, որպես «պարսիկ» հաշվառվածները նույնպես խոսել են թյուրքական խոսվածքով:

Հարկ է նշել, որ Երևանի նահանգում 1886 թ. պարսիկներ չեն հիշատակվում, Զանգեզուրի ուեզդում (գավառ) հիշատակվում են այլ ազգություններ բաժնում շատ քիչ թվաքանակով, իսկ Կարսի մարզի Կարս օկրուգում (շրջանում) հաշվառված էին ընդամենը 46 պարսիկներ, և փոխարենը՝ 17.308 դա-

---

[23] *Որոշ դեպքերում նրանց անվանում էին նաև տաճիկներ:*

[24] *Օսմանցի թուրքերը տարբերակված էին նաև Խորհրդային Ադրբեջանի մյուս թյուրքական էթնիկ խմբերից ինչպես 1921 թ. գյուղատնտեսական ցուցակագրման, այնպես էլ 1926 թ. Համամիութենական մարդահամարի ժամանակ: Իսկ 1937 թ. և 1939 թ. մարդահամարի ցուցակներում «օսմանցի» տարբերակիչը բացակայում է:*

[25] *Կորկոտյան. 1932, 22:*

[26] *Կորկոտյան. 1932, 22:*

[27] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 149, թ. 5:*

[28] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 149, թ. 8:*

բափափախներ[29]: Սակայն, ըստ Հայաստանի բնակչության ազգային կազմի վերաբերյալ 1926 թ. տեղեկագրի՝ Լենինականի գավառի Աղբաբա գավառամասում հաշվառված էր 6311 պարսիկ, 28 թուրք և 1498 օսմանցի թուրք[30]: Նույն տեղեկագրով 444 պարսիկ հաշվառվել է Երևանի գավառում[31], Նոր Բայազետի գավառում՝ 409[32], Մեղրու գավառում՝ 21[33], Զանգեզուրի գավառում՝ 3606[34], Լոռի-Փամբակում՝ 182[35]: Նշված շրջաններում պարսիկների նմանատիպ հաշվառումը 1927–1928 թթ. Կենտրոնական վիճակագրական վարչությունում ենթադրյալ չափերի վերաբերյալ քննարկումների տեղիք տվեց:

Աղբաբայի շրջանը, որտեղ հաշվառված «պարսիկների» թիվն ամենամեծն էր, Ռուսական կայսրության շրջանում եղել է Կարսի մարզի կազմում: 1919 թ. ապրիլից 1920 թ. հոկտեմբեր եղել է Հայաստանի Հանրապետության մի մասը: 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում թուրքական բանակի կողմից գրավվեց ամբողջ Կարսը: Արդյունքում, այս մարզից միակ տարածքը, որը մնաց Խորհրդային Հայաստանին, Աղբաբայի շրջանն էր՝ շուրջ 100 քառակուսի կմ տարածքով: Այստեղ հիշատակված ղարափափախները մարզում հաստատվել էին ռուսական տիրապետության հաստատումից առաջ, հիմնականում՝ Ղազախի և Բորչալուի շրջաններից, մասամբ՝ Պարսկաստանից[36]: Ընդ որում, Թիֆլիսի գավառից տեղափոխվածները սուննի մահմեդական էին, իսկ Մոսուլի շրջակա բնակավայրերից, նաև Պարսկաստանից գաղթածները՝ շիա[37]: Նրանք բնակություն էին հաստատել հենց Աղբաբայի շրջանում, Շորագյալում: Ղարափափախները կայսրության ազգությունների կազմում հիշատակվում են մինչև առաջին Համակայսերական մարդահամարը: 1886 թ. Աղբաբայի շրջանում հաշվառվել է 6069 ղարափափախ[38]: 1897 թ. մարդահամարով Կարսի մարզում հաշվառվել է 29.879 մարդ, ովքեր խոսել են ղարափափախերեն (ղարափափախ էթնանվան հիշատակում այս մարդահամարի ժամանակ չի կատարվել, որովհետև էթնոբաժանման հիմքում լեզուն և կրոնն էին դրված, ուստի ղարափափախերենով խոսողները հաշվառված էին մյուս մահմեդականների հետ)[39]: Նույն մարդահամարով Կարսի մարզում

---

[29] Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. 1893, 37.

[30] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 2:*

[31] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 3:*

[32] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 6:*

[33] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 7:*

[34] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 8:*

[35] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 9:*

[36] *Մ ա լ խ ա ս յ ա ն. 2015, 20:*

[37] *Ս ա ր գ ս յ ա ն. 2015, 100:*

[38] Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. 1893, 52.

[39] *Տե՛ս* Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905, 6.

պարսկերենը նշված է որպես մայրենի լեզու ընդամենը 334 մարդու համար[40]*: Սակայն 1926 թ. մարդահամարի ժամանակ Աղբաբայի շրջանում բնակվող շուրջ 6311 մարդ հաշվառվել է ոչ թե որպես ղարափափախ, այլ որպես պարսիկ:*

1927 թ. հոկտեմբերի 9-ին մարդահամարի հարցերի քննարկման համար հրավիրել էր խորհրդակցություն, որին մասնակցում էին Կենտրոնական վիճակագրական վարչության (այսուհետ՝ Կենտվիճվար) կառավարիչ Վ. Հովսեփյանը, Կենտվիճվարի մարդահամարի բաժնի վարիչ Զ. Կորկոտյանը, ԿԳԿ ներկայացուցիչ Լ. Վարդապետյանը, պատմաբան-ազգագրագետներ Հ. Աճառյանը, Լեոն և Հ. Մանանդյանը: Խորհրդակցության ժամանակ քննարկվում է նաև վերոնշյալ հարցը և կայացվում հետևյալ որոշումը.

«1. Ժողովը նախ հաստատում է այն փաստը, որ Պարսկաստանից յեկածները /հին շրջաններում/, վոչ միայն պարսիկներն այլ յեվ թուրքերը ինքնըստինքյան պարսիկ են անվանում չփոթելով պարսիկ տերմին, պարսկաստանցի տերմինի հետ:

2. Հաստատվում է նաեվ այն փաստը, վոր Աղբաբայի տեղական ժողովուրդից վոչ վոք ինքն իրեն ղարափափախ չի անվանել:

3. Հավանական համարել ներկա պարսիկների յեվ նախկին ղարափափխների միեվնույն ազգություն լինելը:

4. Յեվ վոր վերջնական խոսք կարելի յե ասել այն ժամանակ, յերբ տեղում թե՛ Աղբաբայում, թե՛ Զանգեզուրում յեվ թե՛ այլ տեղերում տեղի կունենա մասնահատուկ ուսումնասիրություն: Սակայն մինչև նման ուսումնասիրության անցկացումը ժողովի որոշմամբ Աղբաբայի շրջանում հաշվառված պարսիկներին համարել ղարափափախներ, իսկ Զանգեզուրի և մյուս վայրերի մեծաթիվ պարսիկներին համարել թուրք»[41]*:*

1928 թ. հունվարին Զ. Կորկոտյանը Անդրկովկասի կենտրոնական վիճակագրական վարչություն է ուղարկել զեկույց՝ «Ժողովուրդների էթնոգրաֆիական բաշխվածության մասին» («Об этнографическом распределении народов»), *որում նշված է՝ Աղբաբայի շրջանում պարսիկների ու ղարափափխների շուրջ ստեղծված շփոթի ուսումնասիրության համար ստեղծված և Աղբաբա ուղարկված կոմիտեն որոշեց հաշվառված 6307 պարսիկների փոխել ղարափափխների, և միայն 4 հաշվառված պարսիկի, որոնք խոսում են պարսկերեն, «թողնել» պարսիկ: Կոմիտեն նաև առաջարկել է «պարսիկ թողնել» Երևանի, Մեղրու, Դիլիջանի և Դարալագյազի պարսիկներին, որոնք հաշվառված են փոքր թվով: Զ. Կորկոտյանը նշում է. «Անձնական թերթիկում գրված է պարսիկ, կամ մարդահամարն անցկացնողը, չխորանալով պարսիկ պատասխանի մեջ, պետք է նրանց համարել թյուրք, կամ էլ լինելով Աղբեջանի թյուրք, հարցվողը սխալմամբ իրեն համարում է պարսիկ»*[42]*:*

---

[40] Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905, 6.

[41] Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905, 6.

[42] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 6:*

Հարց է առաջանում, թե ինչպես է հնարավոր սխալմամբ չփոթել սեփական ազգությունը: Բացի այդ, պարսկերեն խոսող 4 անձանց պարսիկ համարելու հանգամանքը վկայում է, որ թեև տեսականորեն բացառվել էր միայն մայրենի լեզվով էթնիկության որոշումը, սակայն տվյալ պարագայում կրկին դասակարգում կատարվեց ըստ մայրենի լեզվի: Պարսկական ծագման աղոտ հիշողության պատասխանը փորձում է տալ Ե. Լալայանը Երևանի գավառի գործադիր կոմիտեի նախագահին ուղարկված իր գրության մեջ. «Ի պատասխան Ձեր գրության՝ սրանով հայտնում ենք, թե ինչ պատճառով Երևանի ազգաբնակչության մի մասը պարսիկ է անվանում իրեն, հայտնում ենք, որ ինչպես Երևանի, այնպես և նրա գավառի ազգաբնակչությունը սարդարների տիրապետության միջոցին բաղկացած է եղել թե՛ Ադրբեջանի թաթար-թուրքերից, թե՛ պարսիկներից: Ռուսաց տիրապետության միջոցին պարսիկներից շատ-շատերը՝ մանավանդ ազնվականները գաղթել են Պարսկաստան, իսկ մի մասը մնացել են երկրում: Սրանք մի դարվա ընթացքում մոռացել են բուն պարսկերեն լեզուն և խոսում են Ադրբեջանի թուրքերենով, ավանդույթներն էլ միապաղաղվել են, այս պատճառով էլ ընդհանրապես իրենց թուրք են անվանում, և միայն շատ քչերը հիշելով իրենց ծագումը պարսիկ են անվանում իրենց»[43]*: Նշենք, սակայն, որ Արևելյան Հայաստանի տարածքում էթնիկ պարսիկների զանգվածային բնակության վերաբերյալ վկայություններ մենք չունենք, թեև ազգությամբ թուրք վերոնշյալ սարդարները, լինելով պարսկական պետության ներկայացուցիչներ, գուցե և պարսիկ են համարել իրենց: Գաղտնիք չէ, որ Երևանի խաները, սկսած Ամիր-Գունա խանից մինչև վերջին Հուսեյն խանը, եղել են Ղաջար թյուրքական ցեղի ներկայացուցիչներ: Վերջիններիս կողմից շատ հաճախ հովանավորվում էր մահմեդական տարրի ներհոսքը դեպի Երևան քաղաք և խանության տարածք*[44]*: Սակայն, ինչպես նշում է Ե. Լալայանը, Ռուսական տիրապետության հաստատումից հետո տեղի է ունեցել հակառակ գործընթաց ևս:*

Զանգեզուրի շրջանում հաշվառված պարսիկների մասին Զ. Կորկոտյանն իր վերոնշյալ զեկույցում անում է հետևյալ թերի ենթադրությունը. «Զանգեզուրի և մյուս վայրերի վերաբերմամբ վոչ մի առանձին ծանոթություն չի կարելի տալ, բացի այն յենթադրությունից, վոր ՇԻԱ և ՍՅՈՒՆԻ կրոնների շփոթություն լինի»[45]*: Մեկ այլ խիստ հետաքրքրական գրություն է պահպանվել՝ ուղարկված Ղափան Զ. Կորկոտյանի կողմից. «Խնդրում եմ ձեզանից տալ գրավոր բացատրություն Ղափանի մեջ մարդահամարագրված ազգությունների վերաբերյալ: Մի շարք գյուղեր ցույց են տրված պարսիկ, ուրիշները թյուրք, իսկ ավելի մեծ թվով տաճիկ: Խնդրում ենք պարզել՝ ժողովուրդն է ինքզինք այդպես կոչել, թե մարդահամարի ղեկավար աշխատակիցների կողմից հատուկ հրահանգ է տրվել»*[46]*: Դարձյալ անհասկանալի է, թե մարդահամարի ղեկավար աշխատակիցների կողմից ինչու և ինչ հրահանգ պետք է տրված լիներ գյուղերի էթնիկ կազմի վերաբերյալ, եթե մարդահամարի սկզբունքն էր՝ հաշվառել այնպես, ինչպես անվանում են իրենց:*

---

[43] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 32:*
[44] *Այս մասին մանրամասն տե՛ս Կարապետյան. 1987, 95–103:*
[45] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 28:*
[46] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 28:*

Հարցվածների շրջանում պետք է լիներ գոնե մեկ հատկանիշ, որի վրա հենվելով մարդահամարագրողը՝ ազգության բաժնում կլրացներ «պարսիկ» անվանումը: Այդպիսի հատկանիշ կարող էր լինել ղարափափախների մի մասի շիա ուղղության մահմեդական լինելը: 1898 թ. Կարսի մարզի վերաբերյալ տարեկան ակնարկում Աղբաբայի գավառամասում հստակորեն առանձնացված են 5013 շիա ղարափափախ և 5424 սունի ղարափափախ[47]: Նույն տարեգրքում նշված է նաև հետագայում Խորհրդային Հայաստանի կազմում մնացած Աղբաբայի շրջանի որոշ գյուղերի կրոնական կազմը. օրինակ՝ Կարաչանաթա (Արեգնադեմ)՝ 449 շիա ղարափափախ, Բալըղը (Զորակերտ)՝ 237 սունի, Իբիշ (Երիզակ)՝ 414 շիա, Թափաքյոյ (Բերդաշեն)՝ 421 սունի, 56 շիա, Դյուզքենդ (Ալվար)՝ 502 շիա, Ղարանամազ (Աղվորիկ)՝ 281 շիա, 116 սունի, Իլանլը (Արավետ)՝ 216 շիա, Գելլի (Արդենիս)՝ 231 սունի, 40 շիա, Խոզքենդ (Գառնառիճ)՝ 340 շիա, Օքսուզ (Դարիկ)՝ 109 շիա, Գյուլլի (Եղնաջուր)՝ 1222 շիա, Կարաբուլաղ (Շաղիկ)՝ 323 սունի[48] և այլն:

Մեկ այլ խնդիր է ղարափափախների գրավոր լեզվի հարցը: Վկայություններն այս մասին չափազանց սուղ են: Լինելով կիսաքոչվոր անասնապահ՝ ղարափափախների գրավոր մշակույթի մասին հնարավոր է դատել միայն պահպանված տապանաքարերի վրա առկա գրություններից, որոնք արաբատառ օսմաներեն են: Հավանական է նաև, որ էթնիկ-ցեղային պատկանելության վերաբերյալ հարցի խիստ մասնավորեցումը, հնարավոր է, հարցվողի մոտ կապվել է տարածքային ծագման հետ, և Պարսկաստանը նշվել է որպես բնակության նախկին վայր, ելակետ, այստեղից էլ ծագել է «պարսիկ» պատասխանը: Իսկ այն վայրերում, որտեղ պարսիկներ հաշվառված են եղել համեմատաբար փոքր թվով, հնարավոր է, քաղաքացիության և էթնիկության շփոթի արդյունքում ՀԽՍՀ-ում բնակվող Պարսկաստանի քաղաքացիներն իրենց անվանել են պարսիկներ:

Այնուհանդերձ, փաստ է, որ չնայած մարդահամարի հռչակած ինքնորոշման սկզբունքներին՝ հիմնված բացառապես էթնիկ ինքնագիտակցության վրա, որոշակի միջամտություններ և «շտկումներ» տեղի ունեցել են: 1926 թ. մարդահամարի տվյալների երկրորդ մշակման ժամանակ 11.354 հաշվառված պարսիկներից միայն 1078-ն է թողնվել պարսիկ, որոնցից 909-ը խոսում էին պարսկերեն[49]: Մյուսները դասվել են թյուրքերի շարքը՝ արհեստականորեն ավելացնելով վերջիններիս թվաքանակը: Հետևաբար, ազգությունների դասակարգման ցանկում պարսիկները նշվել են «այլ» ազգությունների շարքում: Սակայն Աղբաբայի շրջանում մարդահամարագրված 6309 ղարափափախներին վիճակված չէր երկար «ղարափափախ մնալ»:

Գաղտնիք չէ, որ 1930-ական թվականներին Խորհրդային Ադրբեջանում տիտղոսակիր ժողովրդի էթնանվան որոնումները հանգեցրին «ադրբեջանցի» անվան ընդունմանը ստալինյան սահմանադրությամբ, նաև՝ 1939 թ. մարդահամարով: Սակայն ադրբեջանցի անվանումը տրվեց ոչ միայն Խորհրդային Ադրբեջանի թյուրքալեզու մահմեդական բնակչությանը, այլ նաև Խորհրդա-

[47] *Տե՛ս* Обзор Карсской области за 1898 год. 1899, Ведомость, Лит. А.

[48] Обзор Карсской области за 1898 год. 1899, Ведомость, Лит. А.

[49] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 19:*

յին Հայաստանում, Խորհրդային Վրաստանում բնակվող բազմաթիվ թյուրքալեզու էթնոսների, որոնք Ադրբեջան պետության հետ աղերս չունեին: Այս մասին նշված է նաև 1939 թ. մարդահամարի հիմնական արդյունքներն ամփոփոխ հրատարակության մեկնաբանություններում. «1939 թ. ադրբեջանցիների թվին են դասվել ԽՍՀՄ-ում բնակվող շատ թուրքեր (մեսխեթինցի, բաթումցի, սուխումցի): Դա կապված էր նրա հետ, որ 1926 թ. հետո անցկացվել է թուրք բնակչության «ադրբեջանականացման» քաղաքականություն: 1930-ական թթ. անցկացված անձնագրավորման ժամանակ շատ թուրքեր, գրանցվել են որպես ադրբեջանցիներ: Բացի այդ, ասիմիլյացիայի հետևանքով ադրբեջանական էթնոսի մեջ են մտել դարափափխները, որոնք 1926 թ. հաշվառվել էին առանձին 6 հազար մարդ»[50]: Հիշենք, որ դարափափխները բնակվում էին ՀԽՍՀ ծայր հյուսիս-արևմուտքում, ուստի չէին գտնվում Խորհրդային Ադրբեջանի հետ ուղղակի սահմանային շփման գոտում, և, որպես դարափափխ, իրենց ընկալում ու հիշատակվում են դեռևս նախորդ դարի 30-ական թվականներից: Իսկ Խորհրդային Ադրբեջանի տարածքում բնակվող դարափափխներ չեն հիշատակվում ո՛չ 1921 թ. Ադրբեջանի գյուղատնտեսական մարդահամարի ցուցակներում[51], ո՛չ 1926 թ. Համամիութենական մարդահամարի: Եթե Խորհրդային Ադրբեջանի տարածքում բնակվող մահմեդական ժողովուրդների շրջանում տեսականորեն հնարավոր էր պատկերացնել ասիմիլյացիոն գործընթաց, ապա «ադրբեջանցիների» և դարափափխների միջև նման տարածքային բաժանվածության պայմաններում վերոնշյալ «ասիմիլյացիան» պարզապես անհնար էր: Նշենք նաև, որ ժամանակակից ադրբեջանական հրապարակումներում դարափափխները համարվում են ադրբեջանցի էթնոսի մի ճյուղավորում[52], իսկ թուրքական գրականության մեջ նման մեկնաբանություն չկա, դարափափխները համարվում են թուրքական ցեղախումբ[53]:

Եզրակացություն

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ ազգային հարցի շուրջ ունեցած սկզբունքներով 1926 թ. Համամիութենական առաջին մարդահամարը տարբերվում էր ինչպես նախորդած, այնպես էլ՝ հաջորդող բոլոր մարդահամարներից: Մարդահամարի որդեգրած էթնիկ ինքնագիտակցության սկզբունքի կիրառումը որքան էլ առաջադեմ, այնուամենայնիվ, բավականին խնդրահարույց էր: Այն համապատասխանում էր ազգային հարցի և դրա լուծման շուրջ տվյալ պահին ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշմանը: Նման համապատասխանություն նկատում ենք նաև հաջորդ՝ 1939 թ. մարդահամարի ժամանակ, երբ գրանցված ազգությունների (և ոչ թե՝ էթնոսների) թվաքանակը գրեթե չորս անգամ նվազել էր՝ ասիմիլյացիայի կեղծ պատճառաբանմամբ հաշվառումից դուրս թողնելով ընդամենը 13 տարի առաջ գոյություն ունեցող բազմաթիվ ժողովուրդների: Ուստի 1926 թ. մարդահամարի ժամանակ կիրառված էթնիկ-ցեղային տարբաժանման սկզբունքի արդյունքում առանձին

---

[50] Всесоюзная перепись населения 1939 г. Основные итоги. 1992, 246.

[51] «Известия Аз. ЦСУ» (Баку), 1922, № 2, 40.

[52] Bayramov. 2002, 34; *նաև՝* Valehoğlu. 2005, 4.

[53] *Տե՛ս* Kemaloğlu. 2012, 56.

էթնիկ խմբերի հաշվառումը միայն խորացնում է 1939 թ. մարդահամարի էթնիկ համահարթեցնող բնույթը:

Ասվածի վառ օրինակն է վերը քննարկված պարսիկների, ղարափափախների, թուրքերի շփոթը Խորհրդային Հայաստանում, երբ իրեն որպես պարսիկ ընկալող (ինչով էլ, որ դա պայմանավորված լիներ) և մարդահամարի ժամանակ այդ ընկալումն ամրագրած էթնիկ խումբը վերանվանվեց ղարափափախ, իսկ հաջորդ տասնամյակի վերջում՝ ադրբեջանցի՝ որևէ «ասիմիլիացիոն» աղերս չունենալով Խորհրդային Ադրբեջանի հետ, որտեղ 1920–1930-ական թվականներին պետականորեն ընթանում էր ազգակերտման գործընթաց:

Անուշ Հարությունյան – Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց պատմություն, Ադրբեջանի էթնո-քաղաքական պատմություն, խորհրդային ազգային քաղաքականություն: Հեղինակ է 1 հոդվածի:
anushharutyunyan97@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Խորհրդային Հայաստան» (Երևան), 12. XII. 1926:

Կարապետյան Մ. Մ. 1987, Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ տեղաշարժերը Երևանում 1724– 1800 թվականներին. – ՊԲՀ, № 3, էջ 95– 103:

Կորկոտյան Զ. 1932, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում, Երևան, Պետհրատ, 188 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 163, g. 2, գ. 151, թ. 6– 32, g. 2, գ. 1505, թ. 2– 9, g. 2, գ. 1512, թ. 4, g. 3, գ. 149, թ. 5– 8:

Մալխասյան Մ. 2015, Կարսի մարզի բնակչությունը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 80 էջ:

Սարգսյան Հ. 2015, Կարսի մարզի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը 1878 – 1914 թթ.– «Հայագիտության հարցեր» (Երևան), № 3, էջ 97–113:

Ստալին Ի. 1927, Ազգային հարց: Հոդվածներ, ճառեր, Մոսկվա, ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչություն, 264 էջ:

Антонова Н. Л. 2014, Демография. Екатеринбург, Изд. Уральского университета, 154 с.

Воробьев Н. 1938, Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. М., «Союзоргучет», 103 с.

Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. Краткие сводки. Вып. IV. Народность и родной язык населения. М., ЦСУ, 138 с.

Всесоюзная городская перепись 1923 года – Итоги промышленной переписи. 1926, т. XVII, вып. 1. М., ЦСУ, 629 с.

Всесоюзная перепись населения 1926 года. Перечень и словарь народностей. – http://www.demoscope.ru/weekly/2014/0591/chit_zal01.php

Всесоюзная перепись населения 1939 г.: Основные итоги. 1992. М., «Наука», 254 с.

Данные Всероссийской демографической переписи населения 28 августа 1920 года. Псковская губерния. Вып. 2. Национальность, пол, грамотность. 1923. Псков, «Псковский набат», 58 с.

Евецкий О. 1835, Статистическое описание Закавказского края. СПб., Тип. Штаба Отдельного корпуса внутренней стражи, 308 с.

«Известия Аз. ЦСУ» (Баку), 1922, № 2.

Население России в XX веке. 2000, т. I. М., РОССПЭН, 463 с.

Обзор Карсской области за 1898 год. 1899, Карс, Тип. канцелярии военного губернатора Карсской области, 51 с. (103 табл.).

Первая всеобщая перепись населения Российской Империи. Вып. 6. Наличное население обоего пола по уездам и городам, с указанием преобладающих вероисповеданий и сословий. 1905. СПб., Изд. Центр. Стат. Комитетом Мин-ва внутр. дел, 60 с.

Первая всеобщая перепись населения Российской Империи. Вып. 7. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905. СПб., Изд. Центр. Стат. Комитетом Мин-ва внутр. дел, 38 с.

Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. 1893. Тифлис, Типография И. Мартиросянца, 52 с.

Hirsch F. 2005, Empire of nations: ethnographic knowledge and the making of Soviet Union. New York, Cornell University press, 367 p.

Kemaloğlu M. 2012, Terekeme - karapapak türkleri yerleşim alanlari, Uluslararası Türkçe Edebiyat Kültür Eğitim Dergisi Sayı 1/3, 55-81 s.

Bayramov İ. 2002, Qərbi Azərbaycanin türk mənşəli toponimləri, Bakı, “Elm” neşriyattı, 696 s.

Valehoğlu F. 2005, Qarapapaqlar və onların XIX əsr hərb tarixi, Bakı, Sada, 264 s.

ПРИНЦИПЫ КЛАССИФИКАЦИИ НАРОДНОСТЕЙ ПО ДАННЫМ ПЕРВОЙ ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ 1926 г. (На примере Советской Армении)

АНУШ АРУТЮНЯН

Р е з ю м е

Ключевые слова: всесоюзная перепись, основные народности, определение идентичности, персы, карапапахи, турки, азербайджанцы, Центральное статистическое управление, Агбаба, Зангезур.

Перепись является важным источником точной информации о населении государства. Первая всесоюзная перепись населения в СССР была проведена в 1926 году. По принципам определения национального состава населения эта перепись отличалась как от предыдущей, так и от последующих переписей, руководствуясь исключительно принципом самоопределения. В результате по всему СССР была зарегистрирована 191 народность. Однако трудности возникали также при регистрации некоторых этнических групп. Например, более 6000 человек, проживавших в Агбабском районе северо-западной части Советской Армении, идентировали себя как персы, но дебаты в Центральном статистическом управлении привели к переименованию их в карапапахи. А прописанные в других местах персы причислялись к тюркам в том случае, когда теория переписи запретила всякое переделывание показаний опрашиваемых. Вскоре после этого, в

1939 году, карапапахи считались азербайджанцами, хотя они совершенно не были связаны с азербайджанским государством, где в 1920–30 гг. активно проводился процесс национального строительства.

Ануш Арутюнян – аспирантка отдела христианского Востока Института востоковедения НАН РА, научный сотрудник отдела новой и новейшей истории Музея истории Армении. Научные интересы: история Армении, этнополитическая история Азербайджана, советская национальная политика. Автор 1 статьи. anushharutyunyan97@mail.ru

PRINCIPLES FOR DETERMINING NATIONALITY ACCORDING TO THE FIRST ALL-UNION POPULATION CENSUS OF 1926
(On the example of the Soviet Armenia)

ANUSH HARUTYUNYAN

S u m m a r y

Key words: All-Union census, main nationalities, determination of ethnic identity, the Persians, the Karapapakhs, the Turks, the Azerbaijani, Central Statistical Office, Agbaba, Zangezur.

The census is an important source of accurate information about the population of a state. The first All-Union census in the USSR was held in 1926. This census differed from both previous and subsequent censuses in the principles used to determine the national composition of the population guided solely by the principle of self-determination. As a result, 191 nationalities were registered throughout the USSR. However, difficulties have also arisen in registering some ethnic groups. For example, over 6000 people living in the Aghbaba region of the northwestern part of the Soviet Armenia identified themselves as Persians, but debates in the Central Statistical Department led to their renaming as Karapapakhs. The Persians registered elsewhere were counted as Turks in tha case when census theory forbade any redistribution of interviewers testimony. Shortly after that, in 1939, the Karapapakhs were considered to be Azerbaijani though they were not at all connected with the state of Azerbaijan where from 1920 to 1930 the process of national building was actively carried out.

Anush Harutyunyan – Ph.D. candidate of the Department of Christian Oriental Studies at the Institute of Oriental Studies, Researcher of the Departament of the New and Modern History of the History Museum of Armenia. Scientific interests: History of Armenia, ethno-political history of Azerbaijan, soviet national policy. Author of one article. anushharutyunyan97@mail.ru

Պատմություն հանդես 2022 № 3 Историко-филологический журнал